

խնդրոց վրայ որոշում կուտայ ձայնից պարզ մեծամասնութեամբ :

110.—Երբ թեր ու գէժ ձայներն հաւասար դան, օրինաց ծրագիրն իրարեւ մերժեալ կը նկատուի :

111.—Ազգային ժողովին որոշեալ ամեն ինչեր պէտք է իշխանին ներկայի , որ պարտի հաւանութիւն տալ այն որոշման՝ Ազգային ժողովոյ նիստերուն օրաձեւմէն առաջ :

112.—Ամեն տարի պիտո՞՞ք մը պէտք է ներկայի Ազգային ժողովին :

113.—Պիտո՞՞ք Ազգային ժողովին ընդունուելուն պէս իշխանին կը զըրկուի ի վաւերացումն :

114.—Ազգային ժողովը պիտո՞՞ք փոխանութեան կ'ենթարկէ յօդուած առ յօդուած , և եթէ ինչ ինչ դուռնաբեր բարեփոխին կամ մերժուին , բարեփոխման կամ մերժման պատահաները պէտք է յայտնուին :

Յաւեր Բաւ

ՀՅՈՒՄՈՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 18 մարտ.

Բացորոտապէս սուտ հանուեցաւ այն լուրը թէ Պ. Վատիկանի ինքնապետարան խորհրդոյն նախագահութիւնը պիտի թողու և թէ նախարարութիւնը պիտի փոխուի :

Լոնտոն 18 մարտ.

Երեսփոխանաց ժողովոյն մէջ Պ. Բամպէլ հարցուց կառավարութեան թէ նա ինչպիսիք անդիմանելի ընդհանուր հիւստիստ Պ. Վատիկան պաշտօնանի եղած է թէ պարզապէս խորհրդակցութեան հաւասար կանչուած : Արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Պ. Պուրք չուղեց պատասխանել :

Քորէնթ 18 մարտ

Գերմանիոյ պատմական ճանխարքայի թէ հիւստիստին Նիցիլիի խնդիրը լուծուած կը նկատուի Աւստրիոյ հետ կընքած վերջին դաշնագրութեամբ :

Պէրլին 18 մարտ

Վիլհելմ կայսրը մարդ չպիտի ընդունի իւր օտոնախօսութեան օրը :

Այս առաջը հասած հետաքրքիր

Աթէնք 19 մարտ.

Երկէ առաւօտ Բրէլլիցայի յանձնախումբը դուրսեցաւ Օսմ. պատուիրակը Յունաստանի համար Պէրլինի վեհաժողովոյն 13րդ ասենադրութեան մէջ նշանակեալ սահմանագծէն խիստ տարբեր սահմանագիծ մ'առաջարկեցին : Հելլեն պատուիրակը հակառակեցան՝ ըսելով թէ յիշեալ ասենադրութեան վրայ չհիմնուած բանակցութեանց չեն կրնար մղուիլ իրենք , ասկէ դատ՝ յայտարարեցին թէ յիշեալ ասենադրութեան տառին և իմաստին հակառակ եղող ամեն փոխառնութիւն իրեն ունայն կը նկատեն :

Յայնժամ նիտքը վերցաւ , Հելլեն պատուիրակը հրաժեշտ ասին Օսմ. պատուիրակներէն և Ամֆիթրիթ չափեալ նստան , որ այսօր Բրէլլիցայէն մեկնեցաւ Յունաստան երթալու համար :

Լոնտոն 19 մարտ.

Օսմ. Քօնս.	11 7/8
Փրիս.	1863 43 1/4
»	1869 44 3/4
»	1871 53 1/2
»	1872 21 1/2
»	1873 43 1/2
» Երկրորդ.	69 5/8
Անգլ. Քօնս.	96 7/8

Փարիզ 19 մարտ.

Օսմ. Քօնս.	11,93
Փարիզ Քօնս.	50/0 78,95
»	» 80,90
»	» 50/0 115,55

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՂԹԱԴԱՐԱՄ

Այս առաւօտ հրատարակեալ պաշտօնական աղբ մը կը ծանուցանէ թէ փոխառութեան համար եղած

բանակցութիւնը թէ և տալիս յաջող ելք մը չեն ունեցած , բայց և այնպէս կայանալով կառավարութիւնը թղթագրութիւնը վերջնական համար արդէն ըրած որոշումը պիտի գործադրէ , և ասոր համար հետեւեալ տնօրէնութիւնն ըրած է :

Յօդ. 1. — Առաջագրեալ փոխառութեան եթէ իրականաց , ասկէ առաջ ծանուցուածին պէս և հաս 100 նոյ թղթագրութիւնը փոխարէն ի սակի տալով թղթագրութիւնը բոլորովին պիտի վերցուի չըմբարեութենէ : Իսկ ներկայ կանոնադրութեան հրատարակութեան թուականէն սկսեալ տեւրութեան ամեն եկամուտները դրամով պիտի առնուին , ինչպէս կը գործադրուէր թղթագրութեան հանուելէն առաջ :

Յօդ. 2. — Թղթագրութիւնը մինչև փոխառութեան կնքումն , և կամ , եթէ փոխառութիւնը չյաջողի , մինչև մէկ տարի և չորս ամսոյ չափ չըմբարեութեան մէջ պիտի մնայ : Կառավարութիւնը մարտահրաշքէն զատ բոլոր միւս հատկութիւն մէջ հինգերորդը 1 ոսկեւոյ փոխարէն և հաս 100 նոյ թղթագրութիւնը հաշուով պիտի ընդունի : մէկտարիէն ալ ոսկեւոյ հետ ունեցած տարբերութիւնն հաշուելով պիտի ընդունուի :

Յօդ. 3. — Մինչև ներկայ կանոնադրութեան հրատարակութիւնը մը նայած Պաղպէներն 2րդ յօդուածին տրամադրութեանց համեմատ պիտի ընդունուին կառավարութեան անուկներէն :

Յօդ. 4. — Հասութիւն մէկ հինգերորդին համար կառավարութեան անուկներէն ընդունուելիք բոլոր թղթագրութեան թուգրան բերովնէն բուն աշցոյ առջև հանուելով իրենց պիտի յանձնուի : Իսկ թղթագրութեան պիտի պահուին և երբեք նախարարութեան կողմանէ յետոյ զըրկուելիք հրահանգաց համեմատ պիտի պրին :

Յօդ. 5. — Ներկայ կանոնադրութեան հրատարակութեան թուականին կառավարութեան անուկներէն բուն մէջ գտնուած թղթագրութեան համեմատ պիտի արձանագրուին , և յետոյ թուգրանները պիտի կարուին : Իսկ թղթագրութեան պիտի պահուին և հաս հարիւրնոյ 1 ոսկեւոյ հետ փոխարինուելու համար՝ երբ փոխառութիւնը կնքուի :

Յօդ. 6. — 2րդ յօդուածին համեմատ հասութիւն մէկ հինգերորդին համար ընդունուելիք թղթագրութեան 4րդ յօդուածին համեմատ պիտի ունեցանայ , հետեւեալ երկուական նախարարութեան կողմանէ և կառավարութեան ամեն անուկներէն և ոչ մէկուն թղթագրութիւնը չպիտի տըրուի , և նոր ամսականներն ու ծախքերը մետաղեայ դրամով պիտի վըճարուին , ինչպէս կը գործադրուէր թղթագրութեան հանուելէն առաջ :

Յօդ. 7. — Ներկայ կանոնադրութեան թուականէն առաջ բանած բոլոր ամսականներն ու պարտքերը թէ՛ Ի. Պուլոյ մէջ և թէ՛ դաւառները 1 ոսկին 4 հաս 100 նոյ թղթագրութիւնը հաշուով պիտի առնուին , և այլ տեսակ դրամներով պիտի հատուցուին :

Սոյն տնօրէնութիւնը ծանուցաւ նոր պաշտօնական աղբը կը յայտարարէ թէ հայրն օրան դարձեալ թղթագրութիւնը պիտի ծախուի 6 զը 10 փարայի դնով , և Օսմ. Պանքան պիտի շարունակէ ամեն օր 2,000 ոսկեւոյ չափ դրամը մը փոխանակել թղթագրութեան հետ՝ մարդ զըրկ 2 ոսկեւոյ հաշուով :

Կայսերական հրամանաւ :

Պետական խորհրդոյ անդամ Քալիստի պէյ աքաբին գործոց նախարարութեան գաւառական գործոց վերատեսուչ (Բեաթիպէ Էֆէնդի) անուանեցաւ : Իւլայի առաջին աստիճանաւ , փոխանակ Ս. Ապրօ Էֆէնդիին , որ Պետական խորհրդոյ անդամ անուանեցաւ : Արեւելեան Բումէլիի Եւրոպական յանձնախմբին Օսմ. երկրորդ պատուիրակի պաշտօնն ու վըրան մնալով :

Թօքվիլի գործին վրայ վաղըթ լրագրոյն երէկ տուած և մեր ալ յիշած տեղեկութիւններն հաստատուած են : Պ. Տը Թօքվիլի ծրագրերը բոլորովին մէկ կողմ՝ դրուած է , և Օսմ. կառավարութիւնն որոշած է Պ. Տը Թօքվիլի հետ կնքած բոլոր պայմանագրութիւնները ընկել :

Օսմանեան Պանքային նախագահութեան ներքեւ Գաղղիոյ և Անգղիոյ ամենամեծ պանքաներէն բաղկացեալ դրամական խմբակ մ'Օսմանեան կառավարութեան հետ նոր պայմանագրութիւն մ'ընելու վրայ է : Այս խմբակին հաստատ հիման մը վըրայ գործ տեսնել կարենալու համար՝ աշխարհական եկամուտներն ու ծախքերը նախապէս լաւ քննել ուրոշած է :

Սոյն խմբակին կողմանէ Բ. Դրան տրուած ծրագրին վրայ վաղըթ լրագրոյն հրատարակած տեղեկութեանց նայելով , խմբակն յայտարարէ թէ թէ ըստ Թօքվիլի ծրագրոյն տեւրութեան կողմանէ արուելիք տարեկան հինգ միլիոն ոսկին Օսմանեան երկրագործոց արդի վիճակին մէջ անհնար է հայթայթել , որովհետեւ երկրագործական յանձնախմբին քննութեանց նիւթ եղած պիտո՞՞ք մէկ տարեկան 12 միլիոն ուղի եկամուտ և 18 միլիոնէն աւելի ծախք եղուած է :

Խմբակը կ'առաջարկէ որ ոչ թէ Օսմանեան պաշտօնատարի , այլ բուն Անգղիական և Գաղղիական պաշտօնատարի հանգամանօք Անգղիոյ և Գաղղիոյ կառավարութեանց կողմանէ պատուիրակներ կարդուին , որք Օսմանեան պատուիրակաց հետ պաշտօն պիտի ունենան մարտահանգ ճիշդ հասցիքն ստուգել , ինչպէս նաեւ ապագային մէջ որպիսի աւելնալու ընդունակութիւն ունենան որոշել , և ապա պարտուց միացման ձեւաւրկեր Այս յանձնախումբը մարտահանգ հասցիքներէն զատ ուրիշ հասցիքներու չպիտի խառնուի :

Ժամատարմա կուտած ոստիկանութիւնը կազմելու պաշտօն ունեցող յանձնախումբին իւր գործերն յառաջ կը տան : Ռատիկանութեան հետեւաւորը մարտ 30,000 հոգի է և հետեւաւորը 10,000 պիտի բաղկանայ : Թէ՛ հետեւաւորաց և թէ՛ հետեւաւորաց մէկ մի գումարը չորսական վաշտ պիտի բաղկանան : Բարի վարք և նախնական կրթութիւն ունեցող ոչ-մահմետականք , ինչպէս նաեւ զինուորական չհող մահմետականք սոյն նորակազմ ոստիկանութեան մէջ պիտի ընդունուին : Կը յուսացուի այս պէս զինուորական ընտրի մարմին մը կազմել , որ Օսմանեան բանակին անբաժանելի մէկ մասը պիտի լինի : Նախագահ ոստիկանութիւնը խաղաղութեան ժամանակ երկրին ուղարկուելու պիտի հսկէ , և պատերազմի ժամանակ պահեստի կարիքը բանակ մը պիտի կազմէ : Կը կարծուի թէ այս նորակազմ ոստիկանութեան համար տարին 2 միլիոն ոսկի ծախք պիտի լինի :

Ճէրիտէի Հախախտի խօսքին նախընթաց , Բ. Դրան կ'արդի կուտակու

լութիւնն առաջարկէ է պատերազմական գործոց նախարար Ֆոսֆոր Մուսթոֆա փաշային , բայց նա չէ ընդունել :

Սթամբուլ լրագրին իւր երէկեան թուով կը ծանուցանէ թէ հաւատարկային շինութեանց նախարարութեան խորհրդական Գ. Օտեան է ֆէնտին՝ որ երկար ժամանակէ ի վեր Եւրոպա կը գտնուէր , ի մասոյ Կ. Պոլիս պիտի վերադառնայ և իւր պաշտօնը շարունակէ :

Պոնա Սէրայէն մարտ 8 թուով լուր կուտան թէ Մէլլուտի տօնը , այն է Տաճկաց մարդարէին ծննդեան տօնը , քաղաքին Տաճկաց կողմանէ մեծ հանդիսութեան տարուեր է , և կառավարիչ իօֆանօվի զօրավարը թընդանօթներ արձակել տուեր է : Պոնա Սէրայի Մօլլաներէն և Տաճիկ Երեւելիներէ բաղկացեալ 18 հոգւոյ պատգամաւորութիւն մը զօրավարին քով երթալով , Աւստրիական իշխանութեան շնորհած կրօնական հաւատարութեան համար ժողովրդեան շնորհակալութիւնն յայտնէր է :

Պատգամաւորութիւնն յարկ է թէ երբ Պոնիոյ բոլոր ընտիրքը Աւստրիոյ կառավարութեան շնորհած կրօնական հաւատարութեան աւելի լաւ հատկան , կառավարական նոր դրութեան դէմ ամենախիւր հակառակութիւն չմար :

Հելլենական կառավարութիւնը դրամական զօրաւոր խմբակէ մը 60 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը կնքեց 66/0 տոկոսով :

Ռոտտիթօն դրուած նամակներէ կ'իմանալ թէ քաղաքին հետագործատան վերատեսուչն Հայոց աղբին և կրօնի դէմ՝ որ ընդհանուր քրիստոնէութեան դէմ ըսել է , ծանր թշնամանք և հայհոյութիւն ըրեր է՝ զարնուած հեռագրի մը ստվարական տոմարին իրմէն ուղղուելու պատճառաւ : և ասոր համար թէ՛ մասնաւորաց և թէ՛ աղբին կողմանէ պաշտօնական բոլոր մատուցուեր է տեղական կառավարութեան , Բ. Դրան և թէ՛ Ազգ. Պատրիարքարանին , և գործը՝ Ռոտտիթօի վարչական և դատաստանական խառն ժողովոյ ընդունութեան առնուելով՝ թէ և վկայուեր է որ յիշեալ վերատեսուչն այդ ծանր յանցանոց տէրն է , սակայն թէ՛ ինքն և թէ՛ իւր պաշտօնատան մէջ գտնուող ստորագրաւ պաշտօնեայք բայցարձաւ կապէս ուրացեր են : Կատարուած քննութիւններն ամբողջապէս թէ՛ Բ. Դրան և թէ՛ մեր Ազգ. Պատրիարքարանին հաղորդուեր են տեսնելը ինչ արդիւնք պիտի ունենան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Ն Ս Մ Ր Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
Երկէ երկուան դոցուեցաւ	12,38
Այս առաւօտ բացուեցաւ	43,
Կէս օրին	43, 4
Բուսիլի երկրորդ	Քր. 46 25
Թղթագրութիւն	Իր. 510

ԲՆԹԱՅԻ ԱՐԺԵՂԹՈՅ

Կ. Պոլիս 6 Մարտ	
Ստիլիս Երեւելիք բոմ. Անգլ. Իր.	4,20
» Բոլոնիական թեմ	3,25
Կ. Պոլիս Պանքային	6,12
Քրիստի Երեւելիք	5, 5
Փրիս.	72
» 1863	74
» 1869	71
» 1872	22
» 1873	67
Թրամուս	Օսմ. Իր. 4 73

ԲՆԹԱՅԻ ԳՐԱՄՈՅ

7 Մարտ	
Անգլ. Իր.	109 18
Նաթիլի տոկի	87 10
Իսթիսիլ Ռուս	89 18

